



Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւններ համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Վաղվայ ընտրութիւններ առիթով.—ՆԵՐ-
ԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արձադանքներ. Օպերային
ներկայացումներ. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայերը Պարիզում. Անգլիան
Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայկական տպագրութիւն.

ՎԱՂՎԱՅ ԸՆԾՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Վաղը, կիրակի, սեպտեմբերի 24-ին,
Թիֆլիսի բոլոր հայ եկեղեցիներում տեղի
կունենան պատգամաւորական ընտրու-
թիւններ: Քաղաքի քառասունք եկեղեցիներ-
ում պէտք է ընտրվեն երեք-երեք պատ-
գամաւորներ, որոնք յետոյ գումարվելով
առանձին ժողովի՝ կընտրեն իրանց կողմից
Ներսիսեան դպրոցի հոգաբարձական կազ-
մի համար վեց անձ:

Հոգաբարձական նոր կազմի առաջ զբաղ-
ւած են մի շարք կարեւոր խնդիրներ, որոնք
պէտք է զբաղեցնեն նրան առաջիկայ
չորս տարիներում: Այդ խնդիրներէն առա-
ջ տարեկան դպրոցի նոր շէնքի կա-
ռուցման խնդիրը, որ յարուցվել է շատ
անգամ, մշակվել է մի քանի յանձնաժո-
ղներում և այնու ամենայնիւ մնացել է
զանազան աննպաստ հանգամանքների շնոր-
հիւ չը լուծված վիճակի մէջ: Մինչև որ
դպրոցական վայելուչ և յարմար շէնք չը
կառուցվի, անկարելի կը լինի մտցնել
դպրոցական բարեկարգութեան և մանկա-
վարժական կատարելութեան բոլոր պա-
հանջները իրանց ամբողջութեամբ և վե-
րացնել ներկայումս գոյութիւն ունեցող
թերութիւններն մի մասը:

Կա հերթական ամենամեծ խնդիրն է:
Դպրոցի մանկավարժական և տնտեսա-
կան խնդիրները պահանջում են մշտական
աշխատւոյ ուշադրութիւն, որովհետեւ զբաղ-
ւոյն իբրեւ մի կենդանի և առաջադիմու-
թեան ենթակայ հիմնարկութիւն կարօտ

է մշտական կատարելագործութիւնների և
լինամատարութեան: Պէտք է հարստացնել
դպրոցի դասական պարագաները, ձոխաց-
նելով քարտեզներով, աղիւսակներով և
գործիքներով, հետեւել ուսուցման բարե-
փոխութեան այն եղանակներին, որոնք
մշակվում են աւելի առաջադէմ դպրոց-
ներում, լրացնել դպրոցի առարկաների
ծրագիրը առողջապահութեան, մանկա-
վարժութեան և գիւղատնտեսութեան դա-
սերով, կազմակերպել աշակերտների նիւ-
թական ապահովութեան ծանրակշիռ խն-
դիրը և առաջ տանել դպրոցական կա-
լուածների նորոգութեան, խելացի տնտե-
սութիւն կազմակերպելու և դպրոցական
եկամուտները աւելացնելու կարեւոր խն-
դիրը:

Այդ և ուրիշ կարիքներին դարման ա-
նելու և դպրոցը իր համապատասխան
բարձրութեան վրա պահելու համար ան-
հրաժեշտ է անկեղծ և եռանդուն գոր-
ծողների մի խումբ, որ իրան նուիրի զբաղ-
ւոյն շահերին և չորս տարվայ ընթաց-
քում առաջ վարէ իրան յանձնած պատաս-
խանատու գործը:

Մենք երբեք չենք փակել մեր աչքերը
այն պակասութիւնների առաջ, որ
մենք նկատել ենք թէ Ներսիսեան դպրոցի
և թէ մեր ուրիշ հասարակական հիմնար-
կութիւնների մէջ: Մենք չենք նայել այն
բանին, թէ ովքեր են, ինչ կուսակցութեան
են պատկանում այդ հիմնարկութիւնների
ղեկավարները. մենք մերկացրել ենք թե-
րութիւնները և պակասութիւնները և
այդպէս էլ կը վարվենք ապագայում: Մեզ
համար թանկ են հիմնարկութիւնները և
հասարակական գործը:

Արդարութիւնը պահանջում է, որ մենք
մեր սովորական քննադատական նկատողու-
թիւններից յետոյ տանք և ընդհանուր
եղրակացութիւններ և զցենք համեմատա-
կան մի հայեացք գործող խմբերի վրա,
երբ մի շրջան վերջանում է և սկսվում է

միւսը: Այդ տեսակէտից, պէտք է խոստո-
վանել, որ Ներսիսեան դպրոցի ներկայ հո-
գաբարձական կազմը, որ գործում էր վեր-
ջին վեց տարվայ ընթացքում, կատարեց
մի քայլ դէպի առաջ և հաստատեց դպրո-
ցական կեանքի մէջ բարեկարգ և առաջա-
դիմող մի վիճակ: Դպրոցը վեց տարի շա-
րունակ հանգիստ կեանք է վարում, ազատ
աշակերտական խառնակութիւններից, ու-
սուցչական և հոգաբարձական մանր խն-
դիրներից, դպրոցի տնտեսական խնդիրնե-
րը անդադար մշակման մէջ են. հոգաբար-
ձութիւնը կարողացաւ պահպանել ընտրու-
ղական իրաւունքներից բխած իր դիրքը,
նա մտցրեց հրապարակական հաշուետու-
թեան սկզբունքը դպրոցում, հրատարակեց
դպրոցի պատմութիւնը, կազմակերպեց ու-
սուցչների ապահովութեան դրամարկը,
առաջ մղեց դասադրեքը հրատարակելու
խնդիրը և այնպէս վարեց դպրոցական
ամբողջ գործը, որ զերծ պահեց նրան
խոշոր թիւերի մտնողութիւններից:

Առաջիկայում դեռ շատ գործ կայ անե-
լու: Ցանկալի է, որ դպրոցի գլուխ կանգ-
նած լինեն և ապագայում այնպիսի գոր-
ծողներ, որոնց ոգևորած լինէր անկեղծ
աչքը դէպի Ներսիս Մ-ի հիմնած դպրոցը:
Հասարակութիւնը իր քուէներով պէտք է
վերակազմէ հոգաբարձութիւնը այնպիսի
ներկայացուցիչների միջոցով, որոնք կար-
գանան շարունակի դպրոցի խաղաղ և ա-
նշապաղմուշ գործունէութեան սկզբած
փրկարար շարժումը, առանց ենթադրելու
նրան միջնադարեան փորձերի և պատա-
հանքների:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

XIII

Ես «ոսկէ միջնութեան» (золотая середина)
կուսակից չեմ եւ չափ չեմ հասկանում եմ, որ
եթէ Պետերբուրգը ոչ հիւսիսային բևեռումն

խօսելու ու փաստաբանելու կարողութիւն. յաղ-
թել նրան շատ դժուար էր, մասնաւորապէս որ նա
հարուստ քաղաք ունէր եւ կարողանում էր
թիւրք պոչաւորներին խօսքի հետ ոսկի էլ
մատուցանել: Կ. Պոլսի ամիրայական դասա-
կարգի մէջ կազմվեց նոր կաթողիկոսին հա-
մակողմ կուսակցութիւն եւ ժողովուրդը սիրով
ընդունեց նրան: Այդ բոլոր հանգամանքները
ստիպեցին Յակոբ կաթողիկոսին գնալ Կ. Պո-
լիս (1866)՝ խոսովութիւններին անձամբ վերջ
տալու համար:

Ծերունի կաթողիկոսն էլ ճշմարիտ էր ծանր
պարտքերի տակ եւ նրա հետեւորդների մէջ
էին եւ էլմիաձմեր պարտատէրերը: Բայց դեռ
որքան ծախսեր էին հարկաւոր թիւրքաց մայ-
րաքաղաքում: Այնպիսի հայերի վրա նա լաւ
տպաւորութիւն գործեց իր խաղաղասէր եւ
հեղ ընաւորութեամբ. բայց եւ այդպէս, միայն
մեծ կաշառքների միջոցով կարողացաւ ստանալ
մեծ վեցերեք թուղթ, որի մէջ հաստատվում
էին էլմիաձմեր կաթողիկոսների ընդհանրական
իրաւունքները: Ներկայումս, որ այդ ժամանակ
ճանապարհվել էր Երուսաղէմ, չը կարողացաւ
խափանել Յակոբ կաթողիկոսի ջանքերը եւ
զրկվեց նոյն իսկ Երուսաղէմի պատրիարքու-
թիւնից, որը գնել էր կաթողիկոսութեան հետ
միասին. Մարտիրոս Կաֆայեցին ստացաւ այդ
պատրիարքութիւնը. բայց զրանից, Յակոբ կա-
թողիկոսի օգնութեամբ նախկին Սարգիս պատ-
րիարքն էլ իւրեց Կ. Պոլսի աթոռ Յովհաննէսի
ձեռքից:

Խոսովութիւնները, այնու ամենայնիւ, չը դա-
դարեցին: Անցան 14 տարիներ, բայց Ներսի-
սեան, Մարտիրոս, Կ. Պոլսի պատրիարքական
թեմի նախագահը շարունակում էին կուռել մի-
մեանց քաջաչել: Կ. Պոլսում ութ տարի մի ար-
տասովոր խաղաղութիւն տիրեց. այդ ժամա-
նակ մեծաւ Սարգիսը, չորս տարի պատրիար-
քութիւն անելուց յետոյ, նրան յաջորդեց Ստե-

է գտնվում, ոչ հարաւային, այդ չէ նշանակում,
թէ նա հասարակածումն է, բայց կարծում եմ,
որ անհիմն չէր խօսում այն միջնադարեան ի-
տալացի գրողը, որ ասում էր,—«Երբ գլխիկները
(պապի կուսակիցները) ինձ գրեկին են ա-
նուանում, իսկ գրեկները (գերմանական կա-
պի կուսակիցները) գլխիկ, ես բոլորովին հա-
մոզվում եմ, որ ասածս զուտ ճշմարտութիւն է»:
Այդ իտալացու գրութեան մէջ եւ գտնվում
այժմ եւս:

Այս յօդուածներից մէկում խօսելով Երուսաղի
թեմական դպրոցի մասին, ես չեղտեցի այն մեծ
նշանակութիւնը, որ ունեն մեր դպրոցների
համար մասնագէտ համալսարանականները:
Այդ դուր չեկաւ ընթերցողներից մէկին, որ
մասնաւոր նամակում մեղադրեց ինձ, իբրեւ
համալսարանականներին «բարձր արարածներ»
համարողի:

Այդ առիթով, ես գրեցի «Մշակի» 159 հա-
մարում իմ հայեացքը համալսարանականների
մասին, բայց, դուրս է գալիս, որ այս անգամ
էլ գրածս դուր չէ եկել մի ուսանողի, որ ու-
սանողների եւ համալսարանականների «պրո-
կուրոր» (դատախազ) է անուանում ինձ, նոյն-
պէս մասնաւոր նամակում:

Այդ ուսանողը իր վրա ուսանողութեան
փաստաբանի դեր է վերցնում եւ նամակին
մասնաւոր ձեւ է տուել միայն որոշ նկատում-
ներով,—մասամբ այն պատճառով, որ կարծել
է (չափ անհիմն կերպով), թէ «Մշակի» խմբ-
ագրութիւնը չէ սերտու տպել հերքումներ իր
մշտական աշխատակիցների դրածների դէմ:

Բայց հարցը ընդհանուր է եւ պէտք է քննվի
ընդհանուրի առաջ: Ինչ վերաբերում է նամա-
կագրի այն պատճառաբանութեան, թէ ուսա-
նողների վրա յարձակվել անբարեխղճութիւն
է, որովհետեւ նրանք զուրկ են իրանց արդա-
րացնելու միջոցներից, եւ կարող են ասել մի-
այն այն, որ ուսանողական անձնակազմի ու-
թիւն չէ կարելի հիմնել այդ վերջին հանգա-
մանքի վրա, որ միայն մասամբ է ճիշդ, եւ որ
եւ անձամբ պատրաստ եմ ապացուցանել դրած-
ներս փաստերով, ոչ միայն լրագրում, այլ եւ

փաստս Մեղրեցին, որ երբեք տարի պաշտօն
վարելով, նոյնպէս մեծաւ Բայց հազիւ էր նրա
յաջորդ Յովհաննէս Թովալը պատրիարք դար-
ձել, երբ թիւթեան կուսակցութիւնից Անդրէաս
երէց անուանով մէկը, որին ժողովուրդը տուել
էր «ճէհէնէն» մէրտիվէն» (դժոխքի սանդուղ) անունը,
մատնութիւն արաւ եւ խից պատ-
րիարքութիւնը: Մարտիրոս Կաֆայեցին չը հա-
ւանեց դժոխքի սանդուղքին եւ մեծ փող
ծախանելով, պաշտօնակն արաւ նրան, բայց նրա
տեղը դրեց դժոխքի մի ուրիշ սանդուղք: Դա
մի բոլորովին տգէտ, անազնիւ կեանքի քա-
նանայ էր: Կրպօ անուանով (Կարապետ) Եթէ
Կրպօն կարողանում էր պատրիարք լինել, ին-
չու նոյնը չէր կարող անել օսմանեան բանա-
կում հացթուխի պաշտօնի կատարող Էքմէճի
Սարգիսը: Սա էլ ստացաւ իր ուղածը, վնասեց
Կրպօին եւ քահանայ ձեռնադրվելով դարձաւ
պատրիարք: Բայց Կրպօն շատ էլ կորած խել-
ձերից չէր. նա էլ վնասում էր ուրիշներին, պատ-
րիարք էր դառնում, էլի ընկնում: Այդպիսով
այդ տգէտ եկեղեցականը հինգ անգամ պատ-
րիարքական աթոռը բարձրացաւ:

Եթէ մենք, ընթերցողներս, ձանձրանում ենք
այս յուսահատական եւ զգուշի շահատակու-
թիւնների անվերջ շարքից, պէտք է մի եւ նոյն
ժամանակ չը մոռանանք, որ դրանք աղէտներ
էին ժամանակակիցների համար, աղէտներ, ո-
րոնք դուրէն աւելի մեծ վնասներ հասցրած լի-
նեն հայ ազգին, քան մի որ եւ է բարբարոսի
արշաւանքը: Ապականված բարքերի մի կա-
տարեալ դժոխք էր այդ ժամանակը: Յակոբ
կաթողիկոսը ստիպված էր երկրորդ անգամ
ձանապարհորդութիւն սկսել, չը նայած իր դա-
ռամեալ հասակին: Կ. Պոլսից նա նամակ գրեց
Ներսիսեանին եւ խնդրում էր նրան նայել Կ.
Պոլսի մէջ տեղի ունեցող աղէտներին եւ խղ-
ճալ ազգը. հրաւիրում էր գալ իր մօտ, որպէս
զի կարելի լինի միասին հոգ տանել: Բայց մին-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Աղբիւսնուպօլիս էր գնացել եւ Ներսիսեան
Այնթապցին, տանելով իր հետ մեծ քանակու-
թեամբ ոսկի: Այս մարդը ունէր այն երախտի-
քը, որ յամառութեամբ բաղկեցրել էր յետ խել ու.
Երանցի վանքը յոյների ձեռքից: Բայց այդ լա-
ւութիւնը էփան չը նստեց հայ ժողովուրդի վրա:
Ներսիսեանի մէջ թաքնված էր մի փառասիրու-
թիւն, որի առջև ամեն ինչ զանաւ ինչ պատ-
րիարքական թեմանոսների բաղձանքները: Ե-
րանցի կամեցաւ հասնել հոգեւոր բարձրա-
գոյն իշխանութեան, այսինքն կաթողիկոսանալ:
Նրա միտքն էր բաժանել թիւրքահայերին էլ-
միաձմեր եւ առանձին ու անկախ աթոռ հաս-
տատել, ինչպէս մի քանի տասնեակ տարի ա-
ռաջ փորձել էր անել տիբախալ Սահակը:
Եւ Ներսիսեանը աւելի բախտաւոր եղաւ, քան իր
նախորդը. իր հետ տարած մեծ հարստութիւնը
զնկելով թիւրք կառավարութեան տրամադրու-
թեան տակ, նա ստացաւ կաթողիկոսական հո-
վարտար: Անձնական փառքի համար հայոց ա-
պականված հոգեւորականները որքան քանձներ
էին թափում մահմետականների անյատակ
զրպանները: Դրանք հարստահարված, խելոճ ու
աղէտ ժողովուրդի հիւթերն էին, մի ժողովուրդի,
որ այնքան կարօտ էր մտաւոր լոյսի, որի հա-
մար գրեթէ սուղ մարդիկ Եւրոպայում խելոճ
էին լինել աղքատութիւնից, չը գտնուէին ոչինչ
օժանդակութիւն, ոչինչ համակրանք ու խրա-
խոյս:

Ներսիսեանի կաթողիկոսութիւնը նոր խոտ-

ամեն տեղ, եթէ այդ պահանջէ ուսանողութիւնը, թէեւ այդ անհաւանական է թուում ինձ, որովհետեւ, յոյս ունեւ, այնքան չէ ընկել հայ ուսանողութիւնը, որ նոյն իսկ զրկված լինի իր անկման գիտակցութիւնից եւ անկարող լինի տանել, թէեւ խիստ, բայց անկեղծ բարեկամական եւ հշարհաբար քննադատութիւն։

Յոյս ունեւ նոյնպէս, որ ուսանողութիւնը մեծամասնութիւնը աւելի լաւ հասկացած կը լինի յօդուածներէն իմաստը, քան պարոն նա-մակագիրը, որ չէ հասկացել, որ եւ խօսում եւ վերջին տարիներէ ունեւրկայ ուսանողներէ մասին եւ պնդում եւ ոչ թէ այն, թէ նրանք բոլորը կարելիքստ են, ֆիլիսոփա զբաղվողներն են եւ այլն, այլ թէ այդպիսիներէ տոկոսը հնազանդեալ աւելանում է։

Ասեմք, առհասարակ, տարօրինակ տրամաբա-նութիւն ունի պ. նամակագիրը «Մշակի» 154 համարում, օրինակ, եւ գրել էի. «...Ոստիկան-ն երկրայ ուսանողներէ եւ ուրեմն ապագայ համալսարանականներէ մասին, (նամակագիրը —մի ոչ ուսանող) վերջացնում է. «Մօսկվայի ուսանողութեան հազարն մեծամասնութիւնը սոցէտ է...» Այժմ այս երկրորդը, ուսանող նա-մակագիրը, որ շատ լաւ գիտէ, որ եւ աւարտել եւ համալսարան սրանից 5—6 տարի առաջ, այդ առիթով ինձ գրում է. «Գուք Մօսկվայի ուսանող էք» —միթէ դուք սոցէտ էք»։

Դարձեալ եւ գրել եմ, «Մշակի» 159 համա-րում, որ «ուսանողներէ գրեթէ 1/2-ը եւ ան-կանոն է յաճախում դասախօսութիւններին եւ քննութիւնից մէկ-երկու ամիս առաջ սկսում անգիր անել՝ այն էլ (այստեղ սխալմամբ բաց է թողնված «յաճախ» բառը) ոչ դասախօսութիւն-ները, այլ նրանցից կազմված յիսար կօն-սպէկտները»։ Պարոն ուսանողը այդ առիթով գրում է. «Որտեղից էք վերցրել, որ բժշկա-կան բաժանմունքում սովորում են միմիայն կօնսպէկտներով։ Իմացէք, որ կօնսպէկտներ կան ոչ բոլոր բժշկական առարկաներից... Ա-սեմք, եթէ լինին էլ, նրանցով կարելի կը լինէր տալ թերեւս միայն կիսամեայ քննու-թիւնները եւ ոչ թէ վերջնականները։ Դրա-նում է ամբողջ զանազանութիւնը բժշկակա-նի եւ միւս բաժանմունքների մէջ, որովհետեւ զկլինիկական քննութիւններ տալիս անհրա-ման է կատարեալ գիտութիւն... Իրաւաբա-նական քննութիւնները եւ այդքան մանրա-մասն չը գիտեմ, բայց դուք հօ գիտէք, որ ու-սանողները պատրաստվում են պրօֆէսօրների վիճակով դասախօսութիւններով, որոնք մեծ չափով, ծանրակշիւ, հաստ գրքեր են։ Բօգոյն-պօլի «Римское Право» մօտ հազար տպած էլ պարունակող գիրք է։ Եւսմովի «Фил-наное Право» նոյնպէս փոքրիկ բան չէ։

չեւ Եղիազարի գալը, մանր եկաւ լուծելու եր-կու հակառակորդ կաթողիկոսների պայքարը։ Յակօրը մեռաւ 1680-ին, էլ միմանի միաբա-նութիւնը ի վերջոյ համաձայնութեան եկաւ եւ գտաւ դժուարութիւնից՝ դուրս գալու մի-ջոցը, փոփանակ նոր կաթողիկոս ընտրելու նա հրաւիրեց Եղիազարին չարեանակել իր կա-թողիկոսութիւնը էլ միմանում։ Դա մի բախ-տաւոր եղ էր. Եղիազարը իր փառամարի-թեան լրակատար հատուցում ստացաւ, իսկ թեան ազատվեց մի կամակոր եւ անբարեկից մարդուց, որ տանեակ տարիներ խառնակու-թիւններ էր յարուցել, զոհելով ժողովրդի ա-մենակարեւոր չանքը իր անձնատիրութեան նշանաւոր անդուլթիւն էր մանաւանդ այն, որ հայոց փառամով հոգեւորականների մէջ չը գտնվեց մէկը, որ հետեւէր Եղիազարին, եւ Երուսաղէմի կաթողիկոսութիւնը շարունակելու ոչ մի փորձ էլ չեղաւ։ Բայց անխորտակ մնացին միւս չարեաները։ Եղիազարի ժամանակ եւ նը-րանից յետոյ էլ Կ. Պօլսի աթոռը շարունա-կում էր կռուածադիլ լինել եւ ձեռքից ձեռք փոխադրվել։ Դրութիւնը մի եւ նոյնն էր եւ Երուսաղէմում։ Մենք կը դիմենք մի ժամա-նակակից եւ ականատես պատմողի, որի նը-կարագրած դէպքերը թէեւ ժամանակով մի քիչ յետ են XVII դարից, բայց միանգամայն պարզ եւ ընտրող կերպով են պատկերացնում անբարոյական վարչութեան կամ, աւելի ճիշտ ասած, անիշխանութեան առաջադրած դրու-թիւնը։ Այդ ականատես պատմողը Երուսաղէմի Յովհաննէս Հաննէ հայ վարդապետն է *):

Շատ անգամ էր լինում —ասում է նա — որ մի տարվայ մէջ երկու եւ երեք պատրիարքներ էին փոխվում։ Բոլոր ազգերի մէջ հայոց պատ-րիարքութիւնը նախատիւն էր դարձել։ Ոստը, ի հարկէ, Կ. Պօլսի պատրիարքութեան մասին է, որովհետեւ XVII դարի վերջից Երուսաղէմի

Որտեղի կօնսպէկտներն են գրան... վերջա-պէս, դուք ինքներդ, օրինակ, միթէ կօն-սպէկտներով էք պատրաստվել»։

Ինչ վերաբերում է բժիշկ ուսանողներին, եւ նրանց մասին գրել էի, որ նրանք «բաւական կանօնաւոր են պարապում», որ նրանք աւելի ուշադիր են վերաբերվում դէպի դասախօսու-թիւնները, եւ պնդելով, որ ուսանողներից շա-տերը կօնսպէկտով են պատրաստվում քննու-թիւնների, եւ նրանց ի նկատի չունէի, այլ միւս ուսանողներին եւ զխաւորապէս ի-րաւարմաններին։

Որ Բօգոյնպօլի եւ Եւսմովի դասախօսու-թիւնները դասախօսութիւն են եւ ոչ թէ կօն-սպէկտ, —այդ միակ ճշմարտութիւնն է, որ ասում է պ. ուսանողը իր նամակում, բայց չէ որ թէեւ բոլոր կօնսպէկտներն էլ կազմված են որոշ հաստ, ծանրակշիւ, մեծածաւալ դասախօսու-թիւններից, սակայն կան շատ ուսանողներ, ո-րոնք գերադասում են անգիր անել կօնսպէկ-տը, կազմող բոլոր սխալներով եւ տպագրա-կան բոլոր վրիպակներով, քան մի քանի ան-գամ ուշադրութեամբ կարդալ դասախօսու-թիւնները։ Այդպիսի ուսանողներ շատ են եղել ինձ հետ քննութիւն բռնողների մէջ, եւ այն հանգամանքը, որ եւ ինքս կօնսպէկտով չեմ պատրաստվել, չէ ապացուցանում, թէ եւ ի-րաւունք չունեմ գրելու, թէ «ուսանողների գրեթէ 1/2-ը կօնսպէկտով է պատրաստվում, թէեւ, ինչպէս վերեւն ասարի, այդպեղ սխա-լմամբ բաց է թողնված «յաճախ» բառը, որ ա-ւելի եւս սահմանափակում է իմ ասածը։

Կարծում եմ, այս բոլորից յետոյ հասկանալի կը լինի պ. ուսանողին, թէ ինչու եւ չեմ ըն-դունում նրա առաջարկութիւնը խոստովանել, որ եւս անալիզ եւ յորձանվելով ուսանողների վրա, «որոնք մեծամասնութիւնը, ինչպէս գը-րում է նա, կազմում է լաւագոյն մասը»։

Եւ մի բան միայն կարող եմ խոստովանել, այն է, որ չէի կարծում, թէ կարող է լինել ուսանող, որ այդքան գոհ լինի այժման ու-սանողութիւնից։

ՕՊԵՐԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

Ներկայացուցիչ հետաքրքրական էր։ Մի փոքր փոփոխութիւն եւ Մէյքերէի «Հուլիսի» օպերան ուրիշ կերպարանք էր ստացել արքու-նական թատրոնում, հինգշաբթի օր, ամսին 21-ին։ Զը կար թագուհի — Տիմանինայի փշա-ցած անտանիկ ձայնը եւ նրա տեղը բռնել էր գեղեցիկ սօպրանո։ Անսամբլն էլ այս տարի ա-ւելի համարաշխ միութիւն էր կազմում անցեալ տարվանից։ Վերջապէս եւ հասարակութեան սպասած նորեկ տեսնոր-դրամատիկ Պիկալուգ-

առանձին պատրիարքութիւնը վերացել էր։ Կ. Պօլսի պատրիարքները այնքան շատ կաշառե-ներ էին տալիս թիւք պալատներին, որ որ այլ եւս անհնարին էր պատրիարքարանի սեփական միջոցներով կառավարվել, ուստի նրանք կառավարութիւնից գնում էին եւ Երու-սաղէմի պատրիարքութիւնը, որ եկամուտների մի նոր աղբիւր էր։ Կ. Պօլսում Երուսաղէմի ուխտաւորներից արտուում էին այն բոլոր սուր-բերը, որոնք պիտի հասնէին Կ. Յակօրի վան-քին, ուխտաւորները Երուսաղէմ տանում էին միայն անդրադարձ, որոնք վկայում էին թէ ամեն ինչ ստացված է Կ. Պօլսում։ Երուսաղէ-մի հայոց վանքերը, զրկվելով իրանց եկամուտ-ներից, աւաղին պարտքերի տակ ընկան եւ խալապանի իրողութիւնների ասպարէզ դար-ձան։

Պատրիարքները եւ նրանց արքանականները ու-ղարկում էին Երուսաղէմ իրանց ազգական-ներին եւ ծանօթներին՝ տեղակալների եւ հա-ւատարմատարների պաշտօնով, այսինքն կատա-րեալ տէրերի իրաւունքով։ Իրանք կատարեալ աւագակային արչաւանքներ էին։ Այդ մարդիկ «արաբացի լափիլոզ գայերի եւ արեւան ծա-լանում էին այն ամենը, ինչ տեսնում էին։ Բա-րոյական որ եւ է զսպանակ չը կար նրանց հա-մար, որովհետեւ արաւաւոր մարդիկ էին, մեծ մասամբ յանցաւորներ, որոնք իրանց գործած ոճիւրների համար շատ անգամ էին բանտ նը-տել եւ աքսորվել։ Երուսաղէմի միաբանութիւ-նը թշուառութեան ծալքին էր հասել։ Նա քաղցած էր, միշտ չարչարվում էր։ Վանքում տիրապետողները միայն տեղակալներն ու հա-ւատարմատարները չէին, այլ եւ նրանց կանայք ու որդիքը։ Միաբաններին ուտելու հայ չէին տալիս եւ խեղճներ ստիպված էին ուխտաւոր-ներից ողորմութիւն խնդրել։ Անպակաս էին կոնիները միաբանների եւ աւագակ տիրապե-տողների մէջ, կոնիներ, որոնք տանում էին

գան էլ առողջացել եւ բեւ էր դուրս եկել ա-ռաջին անգամ։

Այս անգամ զխաւոր դերերում կօնարաստ չը կար, բոլորին էլ ուրախութեամբ կարելի էր լսել։ Պիկալուգ (Բաու)՝ գիւրեկան արծա-թահնչուն ձայն ունի, որի բոլոր ըզգիստներն էլ շատ կանօնաւոր մշակված են։ Նրա երգելու չիօլան այնքան կատարելագործված է, որ piaz- nissimo, fortissimo եւ portamento որոշ հատու-թեամբ էր դուրս բերում չնորալի արտիստը։ Ամենից աւելի աչքի էր ընկնում դա վերջին դուռնում։ Նրա խաղակից արտիստուհի Աս-տաֆեւա (Վալենտինա) բարձր հասակ ունի եւ գեղեցիկ կազմուածք։ Այս դերում նա անհա-մեծաւ բարձր էր, քան Աիդայի դերում։ Նա յոյց տուեց թէ երգով եւ թէ խաղով, որ շատ չնորալի օպերային դերասանուհի է, որով լրագէտ վախկեց հասարակութեան համարանքը։

Սոպրանո Կուրյոօվա, որ այնքան էլ գովելի չէր Անտօնիայի եւ Տափանայի դերերում, այստեղ, թագուհու դերում, գրեթէ ֆուրոր արաւ, մանաւանդ երկրորդ գործողութեան բո-լոր կօրքատոր արկաների եւ միլիամետրի նախադասութիւնների մէջ։ Նա ֆիլէտի եւ կարենտի հետ մրցման կտորներում ուղղակի յաղթում էր։ Գօրեանիով (Մարսէ), Սերբերեա-կով (Կոմս) եւ Գերասիմիկօ (Կոմս փեսա) մի-մեանց կապ ներդաշնակութեամբ կատարելի իրանց դժուար դերերը։ Ուտեր, օրկեստր եւ բալետը նոյնպէս լաւ էին։ Հասարակութիւնը հաւանեց։

Կարա-Մուրզա

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Իշխան կառավարչապետի հրամանով, պաշտօ-նական «Кавказ» լրագրի խմբագրի պաշտօնա-կատարի պարտաւորութիւնները յանձնվում են վերոյիշեալ լրագրի մշտական աշխատակից Կ. Ն. Բէկչէվին։

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Պետերբուրգում սպասում են գերմանական յայտնի անթրոպօլոգ, պրօֆէսօր Բուգօլֆ Վեր-խօլի գալուն։ Պրօֆէսօր Վերխօլ մօտ երկու շաբաթ կը մնայ Պետերբուրգում։ Մայրաքաղա-քի բժիշկները հանդիսաւոր ընդունելութիւն են պատրաստում իրանց հօշակաւոր ընկերակիցի համար։

Ի նկատի ունենալով բանտային ընթերցանու-թիւնների բարերար ազդեցութիւնը կալանա-ւորների վրա, արդարադատութեան մինիստ-րութեան մէջ մտադրութիւն կայ նոր կանոն-ների մշակել բանտային ընթերցանութիւններ եւ գրադարաններ կազմակերպելու համար։

Երկու կողմերը թիւք իշխանութիւնների մօտ եւ կաշառքներ էին հանում թէ կեղեքողների եւ թէ կեղեքվողների գրապնից։ Հայը, կրօ-նական ջերմեանաւորութիւնից զրոյգած՝ ար-համարում էր երկար տարածութիւնները եւ գնում էր Գրիստօփի գերեզմանին եր-կրպագելու։ Բայց ինչ էր տեսնում այդ բա-րեպաշտական ճանապարհորդութեան միջոցին։ Կ. Պօլսում նրան թալանում էին, իսկ Երու-սաղէմի նուիրական վայրերում նա ականատես էր լինում խայտառակութիւնների եւ աւագա-կային արարքների։ Նա իր հոգու փրկութեան համար նուէրներ էր տալիս, բայց տեսնում էր իր աչքի տեսնում եւ լսում էր, որ ջերմեանաւոր տուրքը մտնում էր թիւք փաշայանների եւ նրանց ծաւանների գրպանը, որովհետեւ կղերական-ները կուում էին միմեանց հետ, կողոպտում, հարստահարում էին եւ պիտի աշակցութիւն ստանային թիւքերից։

Յախառնութիւնը, աւարառութիւնը հետը-հետէ հրէշաւոր չափի ընդունեցին։ Վանքի անալիզ կալուածները ծախվեցին, սրբազան անօթները դողացվում էին, հալվում եւ վա-ճառքի հանվում, կամ թէ բացարձակ կերպով գրաւ էին դրվում։ Երուսաղէմում համարեա այլ եւս չէր մնացել մարդ, որին հայոց վանքը պարտական չը լինէր։ Վերջ ի վերջոյ կողոպ-տողները այն գրութեան հաւայերին, որ ոչ ոք այլ եւս չէր հաւատում եւ փող չէր տալիս։ Բայց այդ հանգամանքից էլ չէին քաշվում «արաբական գայերը»։ Նրանք կաշառքով եւ բախաւորներ էին գտնում եւ խաբւում էին մարդկանց, որոնց դեռ կարելի էր խաբել։ Եւ Երուսաղէմի հրապարակներում սովորական բան էր տեսնել հայոց եկեղեցական անօթները ծաղրով եւ անարգանքով ծախվելու։ Պարտա-տէրերը կատարելապէս ստրկացրել էին վանքը, մի որ եւ իցէ թիւք պարտաւոր գալիս էր իր պահանջներն անելու, կապում էր իր ձին եկեղեցու դռնից եւ չէր թող տալիս, որ մըտ-

Բժիշկ Տառնեան, որի հետ բանակցութիւն-ներ էր վարում Երուսաղէմի թեմական դպրոցի հոգաբարձութիւնը՝ վերոյիշեալ դպրոցի տես-չի պաշտօնը ստանձնելու համար, համաձայնու-թիւն է յայտնել, եւ այս օրերս ճանապարհ է ընկնում Երուսաղէմ։

Սեպտեմբերի 15-ին, ինչպէս հաղորդում է «Русск. Вѣд.» լրագիրը, Մօսկվայի կանանց կուսերն ընդունված ուսանողուհիները հա-ւաքվեցին ժամի 11-ին առաջօրեայում Գիր-չի տան մէջ։ Կուսերի գրեկտօրը, մուտ-քի տոմսակներ նրանց տալուց առաջ, ող-ջունեց մի ճառով «Մօսկվայի կուսերի առաջին ուսանողուհիներին», բացատրեց նը-րանց կուսերի պրօգրամը եւ ուսանողուհի-ների համար հրատարակված կանօնները, մի եւ նոյն ժամանակ տալով նրանց խորհուրդներ եւ ցուցմունքներ դասախօսութիւնները գրելու, քննութիւնները վերաբերմամբ եւ այլն։ Մա-նաւանդ պնդում էր նա այն բանի վրա, որ ուսանողուհիները զրուշանան ուժից վեր յոգ-նածութիւնից եւ հոգ տանեն իրանց առողջու-թեան մասին։ Ուսանողուհիներ ընդունված են 200, որոնցից 47 ընտրեցին ֆիզիկօ-մաթեմատի-կական բաժին, իսկ 153 հոգի — պատմական-փի-լիսօփայական բաժին։ Տոմսակներ բաժանելու ժամանակ տեղեկութիւն ստացվեց, թէ ժողո-վրդական լուսաւորութեան մինիստրը թող տուեց ընդունելու էլի 50 ուսանողուհիներ, ո-րոնք անհամբերութեամբ սպասում էին իրանց խնդրքների պատասխանին։ Այդ 50 հոգուց 12-ը կը մանեն ժաթեմատիկական, իսկ 38-ը — պատմական բաժինը։

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրու-թիւնը ստատիստիկական տեղեկութիւններ է հաւաքել տարրական դպրոցների վերաբերմամբ Ռուսաստանում։ Մինչեւ 1899 թվ. յունվարի 1-ը մինիստրութեան վարչութեան տակ գտնե-վում էին 37,016 զանազան անուններ կողո-տարական դպրոցներ 84,121 ուսուցիչներով եւ 2,650,058 աշակերտներով։ Մի եւ նոյն ժամա-նակ ուրիշ մինիստրութիւնների եւ գլխաւոր վարչութիւնների իրաւասութեան տակ գտնվում էին 41,653 տարրական դպրոցներ 70,531 ու-սուցիչներով եւ 1,553,188 աշակերտներով։ Ըն-դամներ կայսրութեան մէջ կային 78,699 տար-րական դպրոցներ 153,652 ուսուցիչներով եւ 4,203,246 աշակերտներով։

ՆԵՐՔԻՆ-ԱՍՏՍ, գիւղից մեկ գրում են. «Հազիւ թէ տեղեկութիւն 5-ից երկինքը բա-րեհաճեց ցոյց տալ իր կեռած, եւ գիւղացիք իւրախութիւնով սկսեց իր գործը։ 13 օր նա աշխատում էր որքան կարելի է շուտ պրծնել

նող ու դուրս եկող լինի։ Մի ուրիշը արգելում էր պատարագը կամ ժամատաղութիւնը, եղան դէպքեր, երբ պարտաւորը բարձրանում էր սեղանը պատարագի ժամանակ եւ խլում էր սկիւն պատարագի ձեռքից *): Բայց ոչ մի բռնութիւն չէր վախեցնում հայոց սնանկացած, անպատիւ վանքը։ Եւ պարտատէրերը, վեր-ջապէս, ստիպված եղան հրաման բերել տալ Կ. Պօլսից, որ իրանց պարտքերի փոխարէն ծախեն Կ. Յակօրի վանքը եւ ուրիշ եկեղեցի-ները, Դրանցից մէկը, ս. Փրկչի վանքը, ար-գէն նշանակված էր աճաւորի։ Եւ եթէ պատ-մութեան մէջ տեղի չունեցաւ մի այդպիսի խայտառակ իրողութիւն, պատճառն այն էր, որ Երուսաղէմի մի քանի խեղճ ու պոկված վարդապետներ կարողացան հասկանալ դրու-թիւնը, սրա ու նրա դռներն ընկան եւ աղա-չանքով, պաղատանքով մի կերպ յետաձգել տուին պարտքը։

Աւելի հեռու գնալու տեղ չէր մնացել։ Եւ սակայն այդ սոսկալի դրութիւնը ոչինչ հոգս ու անհանգստութիւն չէր պատճառում հայ սեւագրութիւններն եւ նրանց արքանականներին, որոնք հաւաքվել էին Երուսաղէմում կարծես միայն այն մտքով, որ նորից արդարանան Գրիստօփի խօսքերը։ Ըմտ տուեւ աղօթքի տուն պիտի կոչվի, իսկ դուք նրան դարձրեք աւա-ղակների օրջ։ Կոնիներն ու լրքութիւնները անպակաս էին, սովորական երեւոյթ էր տես-նել թէ ինչպէս ջարդվում են խուցերի դռները եւ պատուհանները, ինչպէս միմեանց միմե-նք փեստում, հայհոյում են միմեանց, թքում միմեանց իրեւնի։ Օսմանեան զօրքերը հարկադր-ված էին յաճախ ներս խուժել կատաղած վա-նականների խուցերը՝ կարգ եւ հանգարտու-թիւն հաստատելու համար։

(Չը շարունակվի)

*) Յամբան, Գ., եր. 770.

*) Երբ պատմութեան սրբոյ և մեծի քաղաքին Երուսաղէմի Կ. Պօլս, 1767, եր. 119—129.

